ՀՀ Լոռու մարզ,Վանաձոր համայնք,Գուգարք բնակավայր 29.12.2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

**«ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ կողմից ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Լոռու մարզի Մեծ սարի գրանոդիորիտների հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու» վերաբերյալ հանրային լսումների**

Բացման խոսքով հանդես եկավ Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հայկանուշ Սարգսյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն (որոշումը խմբ. է ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ) որոշման համաձայն 2025 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 12:00-ին Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական շենքում (Լոռու մարզ, Գուգարք բնակավայր, 6-րդ փողոց, 47 շենք) տեղի է ունենում «ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ կողմից Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Լոռու մարզի Մեծ սարի գրանոդիորիտների հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ հանրային լսումներ:

Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրվել է հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավերը https://vanadzor.am/content/3711 , ինչպես նաև այն փակցվել է Գուգարք բնակավայրի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և խոսքը փոխանցեց «ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանին, ով մանրամասն ներկայացրեց նախագիծը. շնորհակալ եմ, հարգելի տիկին Սարգսյան: Բարև Ձեզ , ես Գուրգեն Հակոբյանն եմ «Մարդ Քար» ՍՊԸ ներկայացուցիչը, տվյալ լսումների պատասխանատուն: Հայտնում եմ, որ օրենքով սահմանված ընթացակարգով տեղի է ունեցել դիմում Վանաձոր համայնքին, Գուգարք ազդակիր համայնքում իրականացնելու օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ քննարկում: Քննարկումը կազմված է երկու մասից, այսինքն առաջին հանրային քննարկումը, որը այսօր է տեղի ունենում, ներկայացուցչական է, եթե ամեն ինչ լավ ընթանա համայնքը տա իր դիրքորոշումը և ներկայացնի ավագանու նախնական հաստատմանը, տեղի կունենա երկրորդ հանրային քննարկումը, որը կիրականացնի ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնը

համայնքի հետ համատեղ: Օրենքով սահմանված կարգով ամբողջ գործընթացը կտևի մոտ 6-8 ամիս, աշխատանքային նախագիծը իր բնապահպանական հատվածով անցնում է փորձաքննություն և եթե օրենսդրության համապատասխանելիությունը հիմնավորվում է և այլ խնդիրներ չեն լինում տրվում է դրական եզրակացություն ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնի կողմից, ինչի արդյունքում նաև տրամադրվում է օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն:

Առաջին հանրային քննարկման առաջնային մոտեցումը այն է, որ նախաձեռնող ընկերությունը ներկայանում է սոցիալական բաղադրիչի մասով իր մոտեցումներն է ներկայացնում համայնքին, համայնքն ըստ դրա իր պատասխանով դրական կամ բացասական հավանություն է տալիս: Սկսենք նրանից, թե համայնքը ինչ կշահի, տվյալ պարագայում հաստատված պաշար գոյություն ունի Լոռու մարզի Մեծ սարի գրանոդիորիտների հանքավայրի հյուսիսային հատվածն է մոտավորապես իրենից մի 5 հա տարածք է ներկայացնում: Գրանոդիորիտների հանքավայրի արդյունահանման թույլտվության առկայության դեպքում մեր ընկերությունը պարտավորվում է, օրենքով այդպես է, այսինքն պետք է հողի նպատակային նշանակությունը փոխվի, հողը դառնա ավելի արտադրական ընդերք օգտագործման, ինչի համար տասնապատիկ ավելի շատ գանձում կկատարվի համայնքին քան մինչ այդ էր: Եվ պայմանագրով ստանձնված պարտավորությունների համաձայն ամենամյա սոցիալական օժանդակություն կլինի համայնքին, որի չկատարման պարագայում ընդերքօգտագործման իրավունքը կդադարեցվի, այսինքն այդ երկու փաստով արդեն իսկ համայնքը կօգտվի:

Բացի դրանից նախաձեռնող կազմակերպության հիմնադիրները հանդիսանում են համայնքի բնակիչներ, հիմնականում աշխատանքները կիրականացվեն՝ ներգրավվելով համայնքի բնակիչներին, այսինքն աշխատատեղեր կբացվեն համայնքի բնակիչների համար:

**Հարց ու պատասխան**

Գուգարք բնակավայրի բնակիչ Գագիկ Քարհանյան - Քանի որ ներկաների մեջ կան տեղանքին անծանոթ մարդիկ, մի փոքր կարճ պատմական ակնարկ անեմ: Մեր տարածքը հարուստ է տարբեր հանքանյութերով՝ ոսկի, երկաթ, պղինձ և այլն: Սակայն դարերով մեր հարստությունը օգտագործել են օտարները, խորհրդային տարիներից առաջ հույները և ֆրանսիացիները, ոչ մի գուգարքցի իր հարստությունից երբեք չի օգտվել, սա եզակի հնարավորություն է, որ այս անգամ գուգարքցին օգտվի այն տարածքից, որը այնքան հեռու է ու անմարդաբնակ, խրախուսելի է որ մեր ընկերները հասել են սար, որպեսզի այնտեղից գրանիտ արդյունահանեն: Ես ոչ միայն կողմ եմ, այլ կոչ եմ անում իմ հայրենակիցներին և գործընկերներին, որպեսզի հնարավորություն տրվի գրանիտ արդյունահանելու, ի նպաստ արդյունահանողների և Գուգարք բնակավայրի: Նախաձեռնողները ծանր

բեռի տակ են ընկնելու, այնքան դժվարամատչելի տարածքից են գրանիտը արդյունահանելու, որը աննկարագրելի է: Կողմ եմ և ողջունում եմ նման նախաձեռնությունը մեր բնակավայրում:

Գուգարք բնակավայրի բնակիչ Արմեն Հարությունյանը հավելեց, որ այդ տարածքում ունեն խոտհարքներ, մարդիկ գնում եմ բնության բարիքներ հավաքելու, զբաղվում են անասնապահությամբ, ճանապարհները իրենք անընդհատ ուղղում, հարթեցնում են և բնակիչների համար ավելի հեշտ է դառնում այնտեղ գնալը: Բացի դրանից աշխատատեղեր չունենք, ընդամենը մի քանի ընտանիք է աշխատում: Կողմ եմ նախաձեռնությանը:

«ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյան – Պարոն Հարությունյան ճանապարհների վերաբերյալ նշեցիք, շատ կարևոր հանգամանք կա, ես բնապահպանական հատվածից չխոսեցի, քանի որ երկրորդ հանրային քննարկմանը ներկ է լինելու համապատասխան փորձագետը, բնապահպանական ամբողջ հատվածը՝ ճանապարհներ կլինի, էնդեմիկ բուսատեսակներ, սանիտարական գոտիներ և այլն ամբողջությամբ դրա մասին քննարկում է լինելու: Նախնական կարող եմ ներկայացնել. համալիր փորձաքննություն է անցնելու, որին մասնակցելու են շուրջ 30 գերատեսչություններ, ամեն մեկը իրենց կարծիքներով՝ հողի, ջրի և այլնի վերաբերյալ: Ճանապարհներն էլ շատ կարևոր է, որ գործող լինեն: Շնորհակալ եմ մոտեցման և դրական կարծիքներ արտահայտելու համար:

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հայկանուշ Սարգսյան – Բոլոր հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ, համարեք, որ դրական եզրակացություն ստացաք այս հանրային լսմանը:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 12:30-ին:

**Հանրային քննարկմանը մասնակցում էին՝**

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հայկանուշ Սարգսյանը, բնակավայրի բնակիչներ,Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության բաժնի աշխատակիցներ, «ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Անտինյանը և ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը:

**Նախաձեռնող՝**
**«ՄԱՐԴ ՔԱՐ» ՍՊԸ տնօրեն** _____ **Տ.Անտինյան**

**Նիստը վարող՝**
**Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար** _____ **Հ.Սարգսյան**